խնդրեցին յինէն դուշակս, և ես ետու զինուորս պահապան գերեզմանին զոր ինքեանք կամէին։ Եւ զինուորքն եկեալ 'ի միաշաբաթու առաւօտուն այսպէս ասացին. յերեկոյի շաբաթուն յորում միաշաբաթն լուսանայր, թնդիւն եղեւ յերկնից և երկիրս պայծառացաւ լուսով եօթնապատիկ առաւել քան զարեգակն, և երեւեցան պայծառ լուսով անթիւ բազմութիւնք լուսակերպ արանց՝ որք աղաղակէին. Քրիստոս Յիսուս խաչեալն Աստուած մեր յարեաւ 'ի մեռելոց. պատուէր ետ լուսակերպ արանց երթալ պատմել աշակերտացն զի երթիցեն 'ի Գալիլեա եւ անդ տեսցեն զնա, և զայս ամենայն տեսեալ զինուորաց պատմեցին մեզ. և մեք ծանուցաք Ինքնակալութեանդ. ողջ լեր։

Իսկ Արդար արքայ յերկրորդ նամակին իւրում առ Տիբեր բողոք կալեալ զանիրաւութենէ Պիղատոսի՝ խնդրէ լուծանել զնա յիշխանութենէ և զայլ ոք առաքել 'ի տեղի նորա։ Ապա 'ի յայտնիլ անիրաւ դատաստանի նորին, կոչեցաւ 'ի Հռոմ տալ համար վասն գործոց իւրոց (35). և դատապարտեցաւ յաքսորս, ուր յուսահատեալ 'ի դառն տառապանաց եղեւ անձին դահիճ աննուէր։ Ընկեցաւ 'ի պատուոյն և Կայիափա, ընդ որ ուրախ եղեն Հրեայք։

Հերովդէս Ագրիպպաս յետ մահուան Տիբերի հնարիւք զերծաւ 'ի բանտէն և առեալ զթագաւորութիւնն Պաղեստինոյ՝ դարձաւ անդ, բռնադատեաց զՀերովդէս չորրորդապետ երթալ 'ի Հռոմ կնաւ իւրով և ինքն յարոյց հալածանս և ձեռն արկ չարչարել զոմանս յեկեղեցւոյն, եւ սպան զՅակոբոս զեղբայրն Յովհաննու սրով. և զի առաւել հաճոյ Հրէիցն լինիցի, կալաւ զՊետրոս եւ կապեալ կրկին շղթայիւք եդ 'ի բանտի, ուստի աղօթիւք հաւատացելոց և 'ի ձեռն հրեշտակի Տեառն պրծեալ ազատեցաւ։ Այլ վասն առաքելոյն Յակոբայ, որ զկնի Ս. Ստեփաննոսի՝ նախ քան զամենայն առաքեալս նա էարբ զբաժակ մարտիրոսութեան, պատմի 'ի Ճառ ընտիրս և Յայտնութիւնս Հայոց, թէ գլխատեցաւ նա 'ի Կեսարիա Պաղեստինացւոց, 'ի գիւղն Ղաղուն, և հրեշտակ Տեառն առեալ զպատուական գլուխս նորին երեր յԵրուսաղէմ և եդ առաջի սուրբ Աստուածածնին, մինչդեռ նստեալ ազային 'ի միասին աստուածամայրն Մարիամ, և տեառնեղբայրն Յակոբոս եւ